



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՔԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



Ս. ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ՔԱՅԱՆԱՅԻՑ ՄԻԱՑԵԱԼ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ ԱՐԵՒԵԼԵԱՆ, ԱՐԵՄՏԵԱՆ ԵՒ ԳԱՆԱՏԱՅԻ ԹԵՄԵՐՈՒ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ԴԱՍՈՒՆ

Երեքշաբթի, 17 Փետրուար 2009ը, Սրբոց Ղեւոնդեանց Քահանայից տօնն է, որ միաժամանակ տօնն է Հայ Քահանայութեան:

Հիւսիսային Ամերիկայի երեք Թեմերու աւանդութիւն դարձած Քահանայից միատեղ համագումարը, որ երկու տարին անգամ մը տեղի կ'ունենայ յաջորդաբար երեք Թեմերէն մէկուն մէջ, այս տարի տեղի պիտի ունենայ Ֆիլատելֆիա քաղաքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ համալիրին մէջ, 16-18 Փետրուարին, հիւրընկալութեամբ Արեւելեան Թեմին եւ նախագահութեամբ երեք թեմակալ Առաջնորդներուն, Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի, Բարձր. Տ. Օշական Արք. Զօլոյեանի եւ Բարձր. Տ. Խաժակ Արք. Յակոբեանի:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազանը եւ հոգեւորականաց դասու անդամները Ֆիլատելֆիա պիտի ճամբորդեն յառաջիկայ Կիրակի, 15 Փետրուարին եւ պիտի վերադառնան Զորեքշաբթի, 18 Փետրուարի երեկոյեան:

Հոգեւորականաց համագումարի օրակարգին վրայ են Վեհափառ Հայրապետին կողմէ 2009ը՝ «Երիտասարդութեան Տարի» հռչակման առիթով ձեռնարկներու ծրագիրը, գեկոյցներ՝ Ազգային Ընդհանուր Ժողովի, Հիւսիսային Ամերիկայի Յիսնամեակի վերաբժեւորման, Վեհափառ Հայրապետի եւ իր պատուիրակութեան Վատիկան պաշտօնական այցի մասին, դասախօսութիւններ՝ հոգեւոր հովիւներու վերաորակաւորման առընչուած, հովիւի առօրեային կապուած եւ անկէ բխած նախադրեալներ եւ թելադրութիւններ: Նաեւ տեղի պիտի ունենան եկեղեցական արարողութիւններ, հոգեւոր խորհրդածութիւններ, եւ Սրբոց Ղեւոնդեանց Քահանայից տօնին առիթով Ս. եւ անմահ Պատարագ պիտի մատուցուի:

BIENNIAL GHEVONTIANTS CLERGY CONFERENCE OF THE THREE NORTH AMERICAN PRELACIES

Tuesday, February 17th, is the Feast of Sts. Ghevontiank which is traditionally also a celebration of clergy. On this occasion, every two years clergy members from the three North American Prelacies assemble for a joint

conference. This year's conference is being hosted by the Eastern Prelacy and is scheduled to take place from February 16 to 18 at St. Gregory the Illuminator Church in Philadelphia. The conference will be presided over by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate of the Western United States, H.E. Archbishop Oshagan Choloyan, Prelate of the Eastern United States, and H.E. Archbishop Khajag Hagopian, Prelate of Canada.

The Prelate and Prelacy clergy members will depart for Philadelphia on Sunday, February 15th, and will return on Wednesday, February 18th.

Items on the agenda of the conference include the planning of events to commemorate the "Year of the Youth" proclaimed by H.H. Catholicos Aram I, reports on the General Assembly, the 50th anniversary celebrations of the North American Prelacy, inter-church relations, the visit of His Holiness to the Vatican, as well as a series of lectures. Divine Liturgy, prayer services, and spiritual reflections are also scheduled.

On Thursday, February 19th, the Prelate will preside over services in celebration of the Feast of Sts. Ghevontiank and Sts. Vartanank. Morning services will be offered at St. Mary's Church in Glendale at 11:00 a.m. with the participation of the clergy order. Very Rev. Fr. Muron Aznikian will deliver the sermon. In the evening, Divine Liturgy will be celebrated at Holy Martyrs Church in Encino with the participation of the clergy order, starting at 6:30 p.m.

ՍՐԲՈՑ ՎԱՐՂԱՆԱՆՑ ՉՕՐԱՎԱՐԱՑ ՏՕՆԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ

Հինգշաբթի, Փետրուար 19-ին, Ս. Վարդանանց Չօրավարաց տօնին առթիւ, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր, առաւօտեան ժամը 11-ին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ժամերգութիւն տեղի պիտի ունենայ:

Պիտի քարոզէ Զրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Գերպ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 7-ին, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազանին ու մասնակցութեամբ Թեմիս հոգեւորականաց Դասուն, Էնսիւնոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ պիտի կատարուի հանդիսաւոր Ս. Պատարագ, տօնախմբելու Սրբոց Ղեւոնդեանց եւ Վարդանանց յիշատակը:

Պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ Զրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիմեան:

MORNING SERVICES AND DIVINE LITURGY ON THE FEAST OF STS. VARTANANK

On Thursday, February 19th, the Feast of Sts. Vartanank will be commemorated with morning services and Divine Liturgy presided over by the Prelate.

Morning services will be offered at St. Mary's Church in Glendale at 11:00 a.m. with the participation of the clergy order. Very Rev. Fr. Muron Aznikian will deliver the sermon.

In the evening, Divine Liturgy will be celebrated at Holy Martyrs Church in Encino with the participation of the clergy order, starting at 6:30 p.m. Very Rev. Fr. Barhev Gulumian will celebrate Divine Liturgy and deliver the sermon.

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԽՐԱԽՃԱՆՔ

Կիրակի, Փետրուար 22-ին, Բուն Բարեկենդանի տօնին առիթով, ընտանեկան խրախճանք տեղի պիտի ունենայ Կլենտեյլի «Արմենակ Տեր Պետրոսեան» սրահին մէջ:

Ձեռնարկը կը վայելէ Առաջնորդ Սրբազան Զօր հովանաւորութիւնը եւ նախաձեռնութիւնն է Ազգային Առաջնորդարանի Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Մարմինին եւ Ծնողական յանձնախումբին:

Պիտի իրագործուի գեղարուեստական ճոխ յայտագիր եւ պիտի հրամցուին համադամ ճաշեր: Մուտքի տուէրն է, մեծերուն համար \$20, 12-էն վար փոքրերուն՝ \$10:

Յաւելեալ տեղեկութեանց համար դիմել Ազգային Առաջնորդարան կամ Կիրակնօրեայ Դպրոցներու պատասխանատուներուն:

CELEBRATING THE EVE OF GREAT LENT ՎՆ PAREGENTAN

Sunday, February 22nd, is the Eve of Great Lent, also known as Paregentan. The annual Paregentan celebration will take place under the auspices of the Prelate at 1:30 p.m. at the "Armenak Der Bedrossian" Hall of St. Mary's Church. The event is organized by the Sunday Schools' Directorate and PTO.

Tickets are \$20 for adults and \$10 for children under the age of 12.

For more information contact the Prelacy office or your local Sunday School representative.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ ՏՈՒՄ ԶԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ԳԼԽԱԴՈՐ ԶԻՊԱՏՈՍԻՆ

Ուրբաթ, 13 Փետրուարի կէսօրին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան այցելեց Զայաստանի Զանրապետութեան Լոս Անճելըսի հիւպատոսարանը եւ հանդիպում ունեցաւ նոր նշանակեալ գլխաւոր հիւպատոս Գրիգոր Յովհաննիսեանի ու այլ պատասխանատու պաշտօնատարներու հետ: Առաջնորդ Սրբազանին այս այցելութիւնը փոխադարձութիւն մըն էր այն այցելութեան, զոր նոր

նշանակեալ հայրենի դիւանագետը տուած էր Ազգ. Առաջնորդարան՝ 6 Փետրուարին: Առաջնորդ Սրբազանին կ'ընկերանային Արժ. Տ. Ռազմիկ Քինյ. Խաչատուրեան եւ Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան:

Հանդիպումը առիթ ծառայեց խորհրդակցելու հայրենի իրադարձութեան ու մասնաւորապէս մեր գաղութի կեանքին մասին, հիւպատոսութեան աշխատանքներուն ծիրին մէջ:

Առաջնորդ Սրբազանը այս առիթով անգամ մը եւս յաջողութիւն մաղթեց հայրենի դիւանագետին ու բարի երթ մաղթեց դիւանագիտական իր անդրանիկ առաքելութեան մէջ: Ան նաեւ յայտնեց, որ Ազգ. Առաջնորդարանը կը ծրագրէ ի մօտոյ ընդունելութիւն մը կազմակերպել ի պատիւ հայրենի գլխաւոր հիւպատոսին, մասնակցութեամբ մեր թեմի ներկայացուցիչներու եւ ծխական շրջաններու ժողովականութեան անդամներու:

PRELATE VISITS THE ARMENIAN CONSULATE TO MEET WITH THE NEW CONSUL GENERAL

On Friday, February 13th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, visited the Consulate General of Armenian where he met with the newly appointed Consul General the Honorable Grigor Hovhannisyan and consular staff. The Prelate and new Consul General previously met when His Excellency visited the Prelacy a week prior on February 6th. The Prelate was accompanied by Rev. Fr. Razmig Khatchadourian and Catholicosate Central Executive member Mr. Khajag Dikijian.

The visit offered the opportunity for the Prelate and Consul General to discuss issues concerning Armenia as well as the endeavors the Consul General has planned for the future.

The Prelate once again wished success to Mr. Hovhannisyan in his new position and informed him that the Prelacy is planning a reception in his honor in the near future with the participation of Prelacy representatives.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԱԷՍԹՐՕ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԵՔԻՃԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Ուրբաթ, 13 Փետրուարի յետմիջօրէին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց բազմավաստակ խմբավար ու երաժշտագետ Յովհաննես Զեքիճեանի այցելութիւնը: Հայաստանի պետական երգչախումբի ղեկավարը Լոս Անճելըս ժամանած էր օր մը առաջ, մօտալուտ երգահանդեսի համար: Հայրենի արուեստագետին կ'ընկերանային Լոս Անճելըսի Հայ Ամերիկեան Երաժշտական ու Թատերական Ընկերակցութեան ներկայացուցիչները,

գլխավորությամբ Տիար Վիքթոր Մարտիրոսեանի: Հանդիպումին ներկայ
եղան նաեւ Զրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներ՝
Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան:



Առաջնորդ Սրբազանը
ողջունեց յարգելի հիւրերը եւ
դրուատիքով արտայայտուեցաւ
Փրոֆ. Չէքիճեանի վաստակին ու
յիշեալ միութեան աշխատանքին
մասին: Հիւրերը, իրենց կարգին,
յայտնեցին, որ Փրոֆ. Յ. Չէքիճեան
ու Հայաստանի Պետական
Երգչախումբը Լոս Անճելըս պիտի
այցելեն, երգահանդեսներ տալու
նպատակով, ընդառաջելով յիշեալ
ընկերակցութեան հրաւերին ու

գործակցութեամբ հայրենի պետութեան: Երգահանդեսը նուիրուած է Փրոֆ.
Յ. Չէքիճեանի՝ անոր ծննդեան 80ամեակին առիթով: Առաջնորդ Սրբազանը
գոհունակութիւն արտայայտեց այս ծրագիրներուն մասին, միաժամանակ
պատրաստակամութիւն յայտելով աջակցելու հայրենի պետութեան
հովանին վայելող այս ձեռնարկին:

Հրաժեշտի պահուն Փրոֆ. Յ. Չէքիճեան եւ Առաջնորդ Սրբազանը
յուշանուէրներ փոխանակեցին:

Նշենք, որ անցեալ Սեպտեմբերին, ի պատիւ Փրոֆ. Յ. Չէքիճեանի
կազմակերպուած երաժշտական ձեռնարկի մը առիթով, Առաջնորդ
Սրբազանը մեծանուն արուեստագետին շնորհած էր օրհնութեան ու
գնահատանքի գիր մը:

ՆԱԵՒ «ԶԱՆ ԹԱՐԻՉ» ՄԻՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐԸ

Աւելի ուշ, Առաջնորդ Սրբազանը ընդունեց այցելութիւնը նաեւ «Զան
Թարիզ» միութեան ներկայացուցիչներուն, որոնք Ազգ. Առաջնորդարան
եկած էին Առաջնորդ Սրբազանը հաղորդ պահելու միութեան
մշակութանուէր աշխատանքներուն ու ծրագիրներուն: Անոնք նաեւ
Առաջնորդ Սրբազանը հրաւիրեցին յառաջիկայ Մարտին նախատեսուած
ձեռնարկին:

Առաջնորդ Սրբազանը գնահատանքով արտայայտուեցաւ միութեան
գործունէութեան մասին, վեր առնելով հայկական բազմադարեան
մշակոյթին ու յատկապէս իրանահայութեան տոհմիկ ժառանգութեանց
անոր յանձնառութիւնն ու նոր սերունդներու փոխանցման առաքելութիւնը:

PRELATE WELCOMES MAESTRO HOVHANNES TCHEKIDJIAN

On the afternoon of Friday, February 13th, H.E. Archbishop Moushegh
Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy renowned Maestro Hovhannes
Tchekidjian, who is in Los Angeles planning future concerts. Maestro Chekijian

was accompanied by representatives from the Friends of Armenian Arts headed by Mr. Victor Mardirossian. Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian were also present.



The Prelate acquainted the Maestro and guests with the general mission and endeavors of the Prelacy. In addition, he highly commended the Maestro for his invaluable contribution to Armenian music.

The guests reported that Maestro Tchekidjian and the Armenian State Choir are in Los Angeles upon the invitation of the Friends of Armenian Arts organization for a concert in honor of the Maestro's 80th birthday. The Prelate extended his well wishes on this occasion and expressed his support for the event. The Prelate has previously presented Maestro Tchekidjian with a letter of blessing and commendation for his role in popularizing and propagating Armenian choir music at a concert held in September of last year.

The meeting concluded with the exchange of mementos.

VISIT OF "JAN TAVRIZ" COMMITTEE

Later in the day, the Prelate welcomed representatives from the "Jan Tavriz" Committee who had come to the Prelacy to report on their recent and upcoming endeavors, and to extend an invitation to the Prelate for their upcoming event in March.

The Prelate commended the committee members for their efforts in preserving our centuries-old Armenian culture and specifically the unique traditions of Iranian-Armenians, and for fostering those traditions in our youth.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԱՆԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՉԱՅ ԱՆԴԱՄ ԳԵՈՐԳ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Հինգշաբթի, 12 Փետրուարի կեսօրին, Ազգային Առաջնորդարան այցելեց Իրանի խորհրդարանի հայ անդամներէն Տիար Գեորգ Վարդանեան եւ ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ: Գ. Վարդանեանի կ'ընկերանային Յ.Յ.Դ. Արեւմտեան Միացեալ Նահանգներու Կեդր. Կոմիտէի անդամներէն Տիար Յարութ Սանուկեան եւ Տիկինը՝ Պիանքա: Ներկայ եղան Կրօնական Ժողովի անդամներ Արժ. Տ. Վազգէն Քինյ. Աթմաճեան, Տ. Կոմիտաս Քինյ. Թորոսեան

Եւ «Նոր Ջուղայի Բարեկամներ» յանձնախումբի ատենապետ Տիառ Վահագ Արզարեանց:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց իրանահայ պետական



պատգամաւորը, որուն առաջին այցելութիւնն էր Ազգային Առաջնորդարան: Ան ընդհանուր գիծերու մէջ ներկայացուց Ազգ. Առաջնորդարանի աշխատանքի դաշտերը, որոնք ծաւալած են անցեալ 35 եւ անելի տարիներուն, հովանաւորութեամբ ու գործակցութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռին: Ան նաեւ խօսեցաւ անմիջական ապագայի ծրագիրներուն ու յառաջիկայ

օրերուն նախատեսած տօնախմբութիւններուն մասին, որոնց կարգին է Տեառնընդառաջի նախատօնակը՝ Ս. Աստուածածին եկեղեցւոյ յարկին տակ. ան հրաւիրեց Տիար Գ. Վարդանեանը, որ ներկայ ըլլայ արարողութեան ու խարուկահանդեսին: Ան նաեւ յայտնեց, թէ յառաջիկայ շաբաթ, Հիւսիսային Ամերիկայի մեր երեք Թեմերու հոգեւորականները Ֆիլատելֆիոյ մէջ պիտի ունենան անանդական համագումար մը՝ Ս. Ղեւոնդեանց տօնին առիթով:

Առաջնորդ Սրբազանը նաեւ անդրադարձաւ այն սերտ կապերուն ու գործակցութեան, որ կը տիրէ Ազգ. Առաջնորդարանին ու մեր Թեմին մէջ գործող նախկին իրանահայերու միաւորներուն միջեւ:

Հիւր պատգամաւորը, իր կարգին, ծանօթութիւններ տուաւ Իրանի հայ գաղութին ազգային կեանքին մասին: Ան անդրադարձաւ շրջանային ու միջազգային իրադարձութեանց իրանահայութեան վրայ թողած ազդեցութիւններուն, նշելով, որ Իրանի հայութիւնը կը մնայ հայկական շերմ օճախ ու սերտ կապեր կը մշակէ Հայաստանին հետ: Իրանի հայ համայնքը նաեւ հաւատարիմ ու գործունեայ քաղաքացիի վարկ կը վայելէ երկրին մէջ ու բարձր գնահատանքի կ'արժանանայ պետութեան կողմէ:

Հանդիպումը առիթ եղաւ տեսակետներ ու տեղեկութիւններ փոխանակելու թեմական երկու շրջաններու հասարակական կեանքին ու գործակցութեան կարելիութիւններուն մասին:

Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը Տիար Գեորգ Վարդանեանի յաջողութիւն մաղթեց իր պետական ու ազգային առաքելութեանց մէջ: Անոնք այս առիթով նաեւ յուշանուէրներ փոխանակեցին:

PRELATE WELCOMES IRANIAN MP GEVORG VARTANIAN

On the afternoon of Thursday, February 12th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy Iranian Parliament member Gevorg Vartanian, who was accompanied by A.R.F. Central Committee member Mr. Harout Manoukian and his wife Bianca. Religious Council members Rev. Fathers Vazken Atmajian and Gomidas Torossian, as well as

the Chairman of the Friends of New Julfa Committee Mr. Vahak Abcarians were also present.



Given it was Mr. Vartanian's first visit to the Prelacy, the Prelate acquainted him with the endeavors of the Prelacy which has served the community for over thirty-five years under the jurisdiction of the Holy See of Cilicia. He briefed Mr. Vartanian on future projects and plans, and extended an invitation for him to attend services and participate in the traditional bonfire on the eve of the Feast of the Presentation of our Lord, which will be celebrated at St. Mary's Church. The Prelate also reported that clergy members from the three North American Prelacies would be gathering in Philadelphia next week for the biennial joint Ghevontians conference. In conclusion, the Prelate spoke highly of the ongoing relations and collaboration with the Iranian-Armenian community.

Mr. Vartanian relayed information about his endeavors and of the state of the Armenian community in Iran. He asserted that the Armenian community remains strong and closely tied with Armenia, and that the Armenian population is well regarded in the country.

The Prelate and guest also exchanged information on commonalities between the Prelacies of the Western United States and Tehran and on collaborative efforts.

The meeting concluded with the Prelate conveying his best wishes to Mr. Vartanian in his service to the Armenians of Iran and presented him with a memento. Mr. Vartanian in turn presented the Prelate with a memento.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՑԵՑ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Հայկական Տօնացոյցին համաձայն, Շաբաթ, 7 Փետրուարը տօնն էր Ամենասուրբ Երրորդութեան ընտրեալ ու հաւատարիմ ծառայ եւ քաջ նահատակ Ս. Սարգիս Չօրավարին, իր որդւոյն Մարտիրոսի եւ իր 14 գինակիցներուն, որոնք նահատակութեամբ վկայեցին իրենց հաւատքը:

Կիրակի, 8 Փետրուարի առաւօտուն, Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ անուանակոչութեան առիթով, եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ Թեմիս Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի կողմէ: Ս. Խորանին կը սպասարկէին Հոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիլիկիմեան եւ եկեղեցւոյ հովիւ՝ Արժ. Տ. Խորէն Թիկյ. Պապոշեան:

Ս. Պատարագի աւարտին տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն, վասն հոգւոցն եկեղեցւոյ Նախկին հոգեւոր հովիւին, ծառայողներուն, բարերարներուն եւ նուիրատուներուն, ինչպէս նաեւ՝ մատաղի օրինութիւն:



Մատաղօրհներէի աւարտին, «Ուրախ Լեր» շարականի երգեցողութեամբ թափօրը յառաջացաւ եկեղեցւոյ գաւիթը, ուր հաւատացեալները մեծ խանդավառութեամբ երգեցին «Կիլիկիա»ն եւ «Ի վեհ բարձանց» հայրապետական մաղթերգները:

Նոյն օրը, կեսօրին, Մարաշի Զարեմակցական միութեան սրահին մէջ տեղի ունեցաւ սիրոյ ճաշ, Նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր:

Ճաշի ընթացքին շնորհակալական խօսքերով հանդես եկան եկեղեցւոյ հոգեւոր հովիւը, հոգաբարձութեան ատենապետը եւ Տիկնանց միութեան ատենապետուհին: Առաջնորդ Սրբազան Զայրը անգամ մը եւս գնահատեց Ս. Սարգիս եկեղեցւոյ մեծ ընտանիքը, եւ օրհնեց բոլորին տարած անսակարկ նուիրումն ու ծառայութիւնը:

PRELATE CELEBRATES DIVINE LITURGY ON THE FEAST OF ST. SARKIS AND THE NAME DAY OF ST. SARKIS CHURCH

In accordance with the Armenian Church calendar, Saturday, February 7th, was the feast day commemorating St. Sarkis, his son Mardiros, and their fourteen soldiers who were martyred for their faith.



On this occasion, which is also the name day of St. Sarkis Church in Pasadena, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy, delivered the sermon, and presided over the blessing of *madagh* at St. Sarkis Church. Assisting at the altar were Very Rev. Fr. Barthev Gulumian and parish pastor Rev. Fr. Khoren Babochian.

The blessing of *madagh* and requiem for the souls of departed servants followed, after which the Prelate was led in a procession to the entrance of the church accompanied by the singing of the Pontifical and Cilician anthems.

In the afternoon the Prelate presided over the name day reception at the hall of the Marash Compatriotic Union. During the reception remarks were delivered by the Pastor, Board of Trustees Chairman, and the Ladies Auxiliary Chairlady. The reception concluded with the Prelate's remarks and blessings during which he once again commended the church servants for their efforts and dedication to the parish.

2009Ի ԱՌԱՋԻՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ Ս. ՏՐԴԱՏ ԵՒ Ս. ԱՇԽԵՆ ՄԱՏՐԱՆ ՄԷՋ

Ազգային Առաջնորդարանի Ս. Աշխեն եւ Ս. Տրդատ մատրան մէջ, ամեն ամսուան առաջին Շաբաթ երեկոներուն, Սուրբ եւ անմահ Պատարագ կը մատուցուի: Առաջաւորաց Պահքին յաջորդող Շաբաթ, 7 Փետրուար 2009ին, որ կը զուգահիսէր Ս. Սարգիս Զօրավարի, իր որդւոյն՝ Մարտիրոսի եւ տասնչորս զինուորներու նահատակութեան տօնախմբութեան, Ազգային Առաջնորդարանի Ս. Տրդատ եւ Ս. Աշխեն մատրան մէջ 2009 տարուան առաջին Ս. եւ անմահ Պատարագը մատուցուեցաւ, նախագահութեամբ Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի: Պատարագիչն էր Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Զոգեւոր Զովիններէն Արժ. Տ. Կոմիտաս Քիւյ. Թորոսեան: Տէր Զայրը իր քարոզին մէջ հաղորդական ոճով, ամփոփ գիծերու մէջ ներկայացուց Ս. Սարգիսի կեանքին գլխաւոր հանգրուանները, քրիստոնէական հաւատքի պաշտպանութեան եւ տարածման ի խնդիր անոր ցուցաբերած խիզախ կեցուածքն ու վկայութիւնը եւ վերջապէս, վասն Քրիստոսի իր նահատակութիւնը:



Յաւարտ Ս. Պատարագին, երիտասարդաց երգչախումբը ինչպէս նաեւ եկեղեցիներու երիտասարդաց խումբերու ներկայացուցիչներ խմբուեցան մատրան մէջ, եւ հանդիսապէս Առաջնորդ Սրբազան Զայրը երիտասարդաց յատուկ աղօթք կարդաց, ուր Աստուծոյ խնդրամատոյց ըլլալով մեր երիտասարդութեան կը խնդրուէր «Աստուածային գօրութիւն, իմաստութիւն, շնորհք, եւ պաշտպանութիւն», որպէսզի աստուածահաճոյ եւ առաքինի կեանք վարեն եւ գերծ մնան վտանգներէն ու որոգայթներէն: Աղօթքի վերջին բաժինով կոչ կ'ուղղուէր երիտասարդութեան ըլլալու զգաստ, համեստ, ծառայասէր, եկեղեցասէր, ծնողասէր, աշխատասէր, քաղցրաբարոյ եւ առաքինի գործերու պատրաստ:

Եկեղեցական արարողութեան աւարտին, «Կիլիկիա» երգով եւ «Պահպանիչ» աղօթքով վերջ գտաւ օրուան տօնախմբութիւնը: Ներկաներ «Տիգրան եւ Չարուհի Տեր Ղազարեան» սրահին մէջ առիթը ունեցան մտերմիկ զրուցելու եւ անուշեղէնով հիւրասիրուելու:

FIRST DIVINE LITURGY OF THE NEW YEAR CELEBRATED AT THE PRELACY CHAPEL ON THE FEAST OF ST. SARKIS

The first Divine Liturgy of the New Year at the Prelacy “St. Dertad and St. Ashkhen” Chapel was celebrated on the evening of Saturday, February 7th, which coincided with the Feast of St. Sarkis commemorating the life and martyrdom of St. Sarkis, his son Mardiros, and their fourteen soldiers.



H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over the Liturgy which was celebrated by pastor of St. Mary’s Church Rev. Fr. Gomidas Torossian. In his sermon Rev. Fr. Gomidas spoke of the important milestones in the lives of St. Sarkis and his companions, their defense and propagation of the Christian faith, and their eventual

martyrdom for their faith.

At the conclusion of Divine Liturgy, youth group members gathered at the Chapel where the Prelate offered special prayers for the youth beseeching the Lord to bless them and grace them with His strength, wisdom, and protection so that they may live righteously and be steered away from wrongdoings.

The service concluded with the Prelate’s benediction and the singing of the Cilician anthem, after which parishioners gathered at the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall for a reception.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԶՕՄԻ ՇՐՋ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՈՒ 100-ԱՄԵԱԿԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան Ուրբաթ, 6 Փետրուարի յետմիջօրէին ընդունեց այցելութիւնը ԶՕՄը ներկայացնող պատուիրակութեան մը, գլխաւորութեամբ Կեդրոնական Վարչութեան ատենապետուհի Տիկին Վիքի Մարաշլեանի: Պատուիրակութեան մաս կը կազմէին Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան եւ ԶՕՄի 100ամեակի յանձնախումբի անդամներ:

ԶՕՄի ներկայացուցիչները Ազգ. Առաջնորդարան եկած էին Առաջնորդ Սրբազանին ներկայացնելու միութեան կարգ մը ծրագիրները, ինչպէս նաեւ տեղեկութիւններ փոխանցելու այլ լայնաշունչ աշխատանքին մասին, որ կը

Նպատակադրե հանդիսաւոր շուքով տօնախմբել ՅՕՄԻ 100ամեակը: Այս ծիրին մէջ, ներկայացուցիչները նշեցին, որ 100ամեակի տօնախմբութեան նպատակով նախատեսուած շարք մը ծրագիրներ, որոնց համար կ'ապաւինին նաեւ Ազգ. Առաջնորդարանի ու հայկական կազմակերպութեանց ու միութեանց աջակցութեան ու գործակցութեան:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց ՅՕՄԻ ժողովրդանուէր ու հայրենաշէն աշխատանքները, վերահաստատելով Ազգային Առաջնորդարանի զօրակցութիւնը անոր առաքելութեան:

PRELATE WELCOMES A.R.S. REGIONAL EXECUTIVE AND CENTENNIAL COMMITTEE MEMBERS

On the afternoon of Friday, February 6th, representatives from the Armenian Relief Society Regional Executive and Centennial Committee visited the Prelacy to meet with H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. The delegation was headed by A.R.S. Central Executive Chair Mrs. Vicky Marashlian.



The representatives had come to the Prelacy to brief the Prelate on a number of activities they have planned, as well as to convey information on the forthcoming 100th anniversary celebration which will take place with the support and collaboration of the Prelacy and community organizations.

The Prelacy commended the efforts and devotion of the members and reaffirmed the support of the Prelacy in their endeavors.
